Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի տնօրեն,
Իրավագիտության թեկնածու
Լ.Ա. Ղազանչյան
«03» հուլիսի 2020թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

ԱՐԹՈՒՐ ՍՐԱՊԻ ՆԱԶԱՐԵԹՅԱՆԻ

«ՎՃՌԱԲԵԿ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ» թեմայով ԺԲ.00.04. «Դատական իրավունք – դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ – հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է քաղաքացիական դատավարության կարևորագույն ինստիտուտներից մեկին՝ վճռաբեկ վարույթի հիմնախնդիրներին ՀՀ քաղաքացիական դատավարությունում: Հաշվի առնելով ՀՀ-ում այս ինստիտուտի բավարար չափով ուսումնասիրված չլինելու հանգամանքը, ատենախոսը փորձ է կատարել մշակել այնպիսի գիտական աշխատանք, որը, ըստ էության, կհանդիսանա ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական դատավարությունում առաջին համապարփակ գիտական հետազոտությունը:

Հայցորդի ատենախոսության ուսումնասիրության առարկա են հանդիսանում քաղաքացիական դատավարության օրենսդրության նորմերը, որոնք կարգավորում են վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման կարգը, ինչպես նաև այն գործոնները, որոնք ազդում են վճռաբեկ վարույթում արդարադատության մատչելիության վրա:

Ատենախոսը հետազոտման **թեմայի արդիականությունը** հիմնավորել է նրանով, որ ժամանակակից դատավարական իրավունքը մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների, կազմակերպությունների շահերի դատական պաշտպանության արդյունավետությունը սերտորեն կապում է կատարելագործված օրենսդրության հետ, որը համարվում է իրավական պետության անհրաժեշտ նախադրյալներից մեկը և երաշխիք է հանդիսանում դատական իշխանության մարմինների արդար և անաչառ գործունեության համար:

Ըստ ատենախոսի ՀՀ 1998թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառման 20-ամյա պրակտիկան ցույց տվեց, որ օրենսդիրը այն ժամանակ լրիվ հաշվի չէր առել նոր հասարակարգում քաղաքացիաիրավական հարաբերությունների ու դրանցով ծագող վեճերի որակյալ կարգավորման առաջնայնությունը: Թեմայի արդիականությունը հիմնավորվում է նաև «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ.. ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ նախագահի 01.07.2012թ. կարգադրությամբ, որով նախատեսվեցին դրույթներ՝ ուղղված քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացմանը՝ այդ թվում նաև վճռաբեկ վարույթի փուլում:

Վերը նշված խնդիրները մասամբ լուծվեցին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում 10.06.2014թ. կատարված փոփոխություններով:

ՀՀ կառավարությունը 2017թ. դեկտեմբերի - ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2018-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ ….. –Ն- որոշումը, սահմանեց նշված բարեփոխումների ռազմավարության ընդհանուր նպատակը և ուղղությունները, այդ թվում ՝ վարչական և քաղաքացիական արդարադատության արդյունավետության ապահովման, նյութական և դատավարական օրենսդրությունների՝ հասարակական հարաբերությունների զարգացմանը համահունչ կատարելագործման և նոր օրենսդրության կիրառման արդյունավետությունն ապահովելու անհրաժեշտությունը:

2015թ. սահմանադրական փոփոխություններով պայմանավորված 2018թ. փետրվարի 9-ին ընդունվեց նոր քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, որն էականորեն կարգավորեց քաղաքացիական դատավարության տարբեր ինստիտուտներում առկա անհստակությունները, կարգավորման բացերը և թերությունները: Ինչպես ցանկացած օրենքի և իրավական ակտի ընդունման և կիրառման ընթացքում անհրաժեշտություն է առաջանում կատարել ուսումնասիրություն, բացահայտել կիրառման ընթացքում ի հայտ եկած թերությունները և բացերը, անել օրենսդրությունը կատարելագործելու առաջարկներ, հեղինակի աշխատանքն ուղղված է ՀՀ նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքի հենց այդ թերությունների (բացթողումների) բացահայտմանը և համապատասխան առաջարկների մշակմանը, որը և օբյեկտիվորեն արդիականություն ու հրատապություն է հաղորդում սույն գիտական հետազոտությանը:

Ատենախոսության մեջ հեղինակը մանրամասնորեն ուսումնասիրության է ենթարկել իրավունքի տեսությանը, քաղաքացիական դատավարության իրավունքին վերաբերող մեծածավալ գրականություն, օգտվել է միջազգային պայմանագրերից և դատական պրակտիկայի նյութերից: Ընդ որում, ատենախոսը աշխատանքում, դատավարական իրավունքի դրույթների մեկնաբանման և վերլուծման հիման վրա բացահայտել է «արդարադատության արդյունավետություն» հասկացությունը, հստակեցրել է մի շարք արդի հիմնախնդիրներ և առաջարկել է պրակտիկ լուծումներ:

Գրախոսվող աշխատանքը բաղկացած է չորս գլխից, որոնք ներառում են տասներկու ենթագլուխներ: Հեղինակը մանրամասնորեն վերլուծում է վերոնշված և այլ հարցերը՝ առաջարկելով հնարավորինս համապարփակ լուծումներ, այդ թվում՝ օրենսդրության փոփոխության առաջարկներ և իրավակիրառ պրակտիկայում առաջացած հարցերի լուծման եղանակներ: Հատկանշական է, որ ատենախոսը, հիմնվելով հայրենական և արտասահմանյան (հատկապես՝ Ռուսական) քաղաքացիական դատավարության ներկայացուցիչների կարծիքների վրա, իր կողմից քննարկվող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ արել է ինքնուրույն դատողություններ և որ շատ կարևոր է՝ ՀՀ օրենսդրությունը կատարելագործելու

գործուն առաջարկներ ու եզրակացություններ, որոնք աշխատանքը դարձնում են ինքնուրույն հետազոտություն:

Այսպիսով, ընտրված թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտի և առարկայի ճշտությունը, նպատակները, խնդիրների առաջարկվող լուծումները, ինչպես նաև հետազոտության տեսական և գործնական նշանակությունը կասկած չեն հարուցում:

Գրախոսվող աշխատանքի **գիտական նորույթը** կայանում է նրանում, որ հեղինակի կողմից փորձ է արվել համալիր վերլուծության ենթարկել վճռաբեկ դատարանում քաղաքացիական գործերի քննության դատավարական առանձնահատկությունները՝ վճռաբեկ փուլում արդարադատության մատչելիության տեսանկյունից և մշակել ու ներկայացնել սույն ոլորտում կամ դրա հետ կապված այլ ոլորտներում առկա խնդիրների լուծումները:

Մինչհեղափոխական դատավարական մտքի տեսական մշակումների, խորհրդային և ժամանակակից դատավարական դրույթների մեկնաբանման հիման վրա կատարվել է համալիր ուսումնասիրություն քաղաքացիական դատավարությունում դատական ակտերի վերանայման խնդրի վերաբերյալ՝ վերանայման ընթացակարգը կարգավորող օրենսդրության կատարելագործման տեսանկյունից, հիմնավորվել են քաղաքացիական դատավարությունում վճռաբեկ վարույթի իրավական ընթացակարգը կարգավորող նորմերը կատարելագործելու առաջարկները, հաշվի առնելով դատական պաշտպանության իրավունքի միջազգային իրավական պահանջները:

Ըստ սույն աշխատանքի հեղինակի՝ գիտական նորույթ են պարունակում նաև պաշտպանության ներկայացված դրույթները, որոնց մի մասն արդեն նա հրապարակել է մինչ գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունումը, որոնք օրենսդիրն ընդունել է, ու որոնց մնացած մասի ներդրման դեպքում, նրա կարծիքով կբարելավվեն ՀՀ քաղաքացիական դատավարության վճռաբեկ ինստիտուտը և դատական պրակտիկան:

Պաշտպանության ներկայացված դրույթները մշակելիս ատենախոսը ոչ միայն ղեկավարվել է դատական պրակտիկայի նյութերով, այլ նաև պահպանել է դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական

բովանդակությունը և արդար դատաքննության իրավունքին վերաբերող նորմերի պահանջները:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ ատենախոսության մեջ ձևակերպված տեսական դրույթներն ու եզրակացությունները կարող են օգտագործվել քաղաքացիական դատավարությունում վճռաբեկ վարույթի խնդիրների հետագա գիտական մշակման համար: Հետազոտության նյութերը կարող են օգտակար լինել նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում վճռաբեկ վարույթի փուլը դասավանդելիս, քաղաքացիական դատավարության իրավունքի վերաբերյալ մեթոդական և ուսումնական ձեռնարկներ կազմելիս:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ ատենախոսության մեջ ձևակերպված եզրակացություններն ու առաջարկությունները կարող են օգտակար լինել օրինաստեղծ գործունեության մեջ քաղաքացիական դատավարության օրենսդրության նորմերի կատարելագործման ժամանակ բացահատված բացթողումներն ու թերությունները հարթելու, վճռաբեկ դատարանի գործունեության արդյունավետության բարձրացման, իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ դատական պաշտպանության ապահովման համար:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տվել հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի վերաբերյալ առաջ քաշված խնդիրները: Աշխատանքն ունի տրամաբանական կառուցվածք, դյուրընթեռնելի ոճ և իրավաբանորեն գրագետ շարադրանք:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրապարակած տասնչորս հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Վերոնշվածի հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ աշխատանքում առկա են նաև որոշակի թերացումներ և բացթողումներ, որոնք հանգում են հետևյալին.

1. Աշխատանքի նախաբանում հեղինակը հետազոտության հիմնական նպատակ է համարել նաև վճռաբեկ վարույթի տեսական և գործնական խնդիրների մշակումը, մինչդեռ այդ խնդիրները գրականության մեջ մշակված են տասնյակ տարիներով և հեղինակը իրականում, հիմնվելով դրանց վրա, ուղղակի ուսումնասիրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում եղած թերություններն ու բացթողումները և համապատասխան առաջարկներ է արել գործող օրենսդրության կատարելագործման համար:

2. Մեր կարծիքով կասկածելի է հեղինակի այն առաջարկությունը, ըստ որի Վճռաբեկ դատարանին պետք է իրավունք վերապահել բողոքարկման արդյունքում նոր դատական ակտ ընդունել՝ գործը չվերադարձնելով նոր քննության:

3. Աշխատանքում կան նաև տեխնիկական թերություններ: Օրինակ՝ և՛ ատենախոսության և՛ սեղմագրի 5-րդ էջերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունման և գործողության մեջ դնելու մասին նշված է երկու անգամ՝ և՛ տեքստում, և՛ տողատակում:

Պետք է նշել, որ մատնանշված նկատառումները հիմնականում ունեն մասնավոր և խորհրդատվական բնույթ, դրանց մի մասը վերաբերում են քաղաքացիական դատավարության իրավունքի մեջ վիճելի հարցերին և չեն կարող ազդել Ա. Նազարեթյանի գիտական աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի վրա:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ Ա.Նազարեթյանի կողմից հրապարակված հոդվածներում լիարժեքորեն արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Հետևաբար՝ Արթուր Սրապի Նազարեթյանի «Վճռաբեկ վարույթի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» թեմայով ատենախոսական հետազոտությունը իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն և արժեքավոր ուսումնասիրություն, որը ներառում է

քաղաքացիական դատավարության իրավունքի, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար էական նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ: Իսկ հետազոտության արդյունքները քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության ոլորտի համար ունեն կարևորագույն նշանակություն:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Արթուր Սրապի Նազարեթյանի «Վճռաբեկ վարույթի հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.04- «Դատական իրավունք-դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի՝ 2020 թվականի հուլիսի 2-ի նիստում, որին մասնակցել են բաժնի վարիչ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ. Ստեփանյանը, գլխավոր գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Հ. Սաֆարյանը, ավագ գիտաշխատողներ, իրավագիտության թեկնածուներ Լ.Ա. Ղազանչյանը, Ա.Վ. Շուքուրյանը, Ա.Ա. Աբրահամյանը և Բ.Վ. Ղազինյանը:

ՀՀԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի պետաիրավական
հետազոտությունների բաժնի վարիչ,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Հ.Մ.Ստեփանյան**